Հաստատում եմ

Տնօրեն ______ Ա. Վեզիրյան

<<...............>>..............................հոկտեմբեր........2023թ.

ՆՈՐԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

ՀՈԳԵԲԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Հոգեբան՝ հ. գ. թ. Արմինե Մուրադյան

Հոգեբանական աջակցության տրամադրումն ըստ շահառուի կարիքի

1-ին աստիճան = հսկում
(թեթև)

1.Ցուցաբերվում է մասնագիտական թեթև աջակցություն:

2.Հաղորդակցվելը հեշտացնելու համար նվազագույն ուղղորդում և հավելյալ ժամանակ:

3.Ընտրություն կատարելու և որոշումներ կայացնելու համար երեխային անհրաժեշտ է նվազագույն ուղղորդում:

4.Սեփական վարքը կառավարելու համար անհրաժեշտ խոսքային և ոչ խոսքային ուղղորդում և աջակցություն:

Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթակա ն – 20 րոպե

2-րդ աստիճան = հաճախակի աջակցություն
(միջին)

1.Համապատասխան մասնագիտական աջակցություն՝ սեփական վարքը կառավարելու, պարզ տարրական գործողություններ կատարելու համար:

2.Խոսքն արտաբերելու համար անհրաժեշտ են համապատասխան մասնագիտական աջակցություն և հավելյալ ժամանակ:

3.Համապատասխան մասնագիտական աջակցություն՝ այլ անձանց հետ հեշտ հաղորդակցվելու և շփվելու համար:

4.Գործողությանը մասնակցելու և հրահանգը հիշելու համար անհրաժեշտ աջակցության տրամադրում:

5.Խոսքային, տեսողական և ֆիզիկական հուշումների տրամադրում (նկարներ, բառեր, ժեստեր և գործողություններ)՝ զարգացնելու մտածողությունը, հիշողությունը, խոսքը, վարքը և հաղորդակցությունը:

Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթակա ն – 40 րոպե

3-րդ աստիճան = մեծ հաճախականությամբ աջակցություն
(ծանր)

1.Կրթության համար անհրաժեշտ հարմարեցված նյութերի և տեխնոլոգիաների ապահովում (օրինակ՝ գրքեր, համակարգիչներ, ուսուցանող խաղալիքներ), ինչպես նաև՝ համապատասխան հատուկ մանկավարժական մասնագիտական զգալի աջակցություն:

2.Տրամադրել մասնագիտական զգալի աջակցություն և բազմազան մեթոդների և նյութերի կիրառում՝ բարձրացնելու զգայարանների միջոցով տարաբնույթ ազդակների ընկալման հնարավորությունը:

3.Համապատասխան մասնագիտական զգալի աջակցության տրամադրում՝ ուրիշների խոսքը հեշտ հասկանալու համար:

4.Հեշտ ընկալելի և պարզեցված խոսքի միջոցով հնարավորինս հասանելի դարձնել նյութը՝ տրամադրելով հավելյալ ժամանակ:

Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթակա ն-100 րոպե

4-րդ աստիճան = մշտական աջակցություն
(խորը)

1.Մշտական մասնագիտական աջակցություն երեխային՝ կառավարելու սեփական վարքը:

2.Մշտական մասնագիտական աջակցություն երեխային՝ առօրյա հաղորդակցումը և շփումը հեշտացնելու համար:

3.Անհրաժեշտ մասնագիտական զգալի աջակցություն՝ այլ անձանց հետ խոսքային և ոչ խոսքային շփումը հեշտացնելու համար՝ կիրառելով զգալի ուղղորդում և տրամադրելով հավելյալ ժամանակ:

4.Մշտական աջակցություն խոսքային, տեսողական և ֆիզիկական հուշումների և մեթոդների բազմազանության կիրառմամբ, որպեսզի երեխան վերհիշի և կատարի գործողությունը:

5.Այլընտրանքային միջոցների, օժանդակող իրերի և պարագաների կիրառում՝ զարգացնելու հիշողությունն ու վարքը:

Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթակա ն – 60 րոպե

Աշխատանքի բովանդակությունը՝ ԿԱՊԿ-ԹԻՄ

1.	Կատարել դիտարկումներ՝ ԿԱՊԿՈՒ աշակերտների ՝բացահայտման, գնահատման անհրաժեշտության, վերագնա հատման, դպրոցական մակարդակների գնահատման նպատակով:	Ընթացիկ,հոգեբան
2.	Իրականացնել դասալսումներ և դիտարկումներ ՝ պարզելու ԿԱՊԿՈՒ աշակերտների ուսումնական գործունեության արդյունավետությունը՝դասին ներգրավվածության ուղղու թյամբ , յուրաքանչյուր սովորողի զարգացման շարժընթացը, ինչպես նաև վերլուծել հոգեբանի աշխատանքի շարունակականությունն ու արդյունավետությունը ապահովող գործառույթների ամբողջականությունը	Ընթացիկ,հոգեբան
3.	Ուսումնասիրել ԿԱՊԿՈՒ աշակերտների բժշկական, հոգեբանամանկավարժական փաստաթղթերը: ըստ անհրաժեշտության:	Ըստ անհրաժեշտության-ԱԽ, ուսուցիչներ,ծնողներ,հոգեբան

	Համագործակցել ԱԽ –ի ,ուսուցիչների և ծնողների հետ ՝ԿԱՊԿՈՒ աշակերտների խնդիրների վերհանման և դպրոցական մակարդակի Գնահատման ներկայացնելու	
4.	Ուսումնասիրել և վերլուծել սովորողների գործնական ,թեմատիկ և կիսամյակային աշխատանքները՝ նպատակ ունենալով պարզելու ուսումնական կարողությունների ձևավորման ընթացքն ու արդյունքները	Ըստ անհրաժեշտության,հոգեբան
5.	Մանակցել ուսումնական աշխատանքի գծով տեղական կողմից՝ ամիսը մեկ անգամ կազմակերպած, տվյալ սովորողի ուսուցիչների և աջակցության խմբի անդամների ժողովին՝ ամփոփելու տվյալ ամսվա ընթացքում սովորողի ԱՈԻՊ-ով նախատեսված աշխատանքները և աջակցող	Ընթացիկ,հոգեբան

	ծառայությունների արդյունքները:	
6.	Մասնակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների անհատական ուսումնական պլանների/ԱՈՒՊ/ ընթացիկ Աջակցության խումբ /ԱԽ/ կազմման և վարման գործընթացին: Մասնակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների մանկավարժական աջակցության ծառայությունների անհատական պլանի /ՄԱԾԱՊ/ կազմման և վարման գործընթացին: ԱԽ Մասնակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների առաջընթացի գնահատմանը:	Ընթացիկ,հոգեբան
7	Վերահսկել ԿԱՊԿՈՒ աշակերտների գիտելիքներին, կարողություններին ներկայացվող պահանջների նվազագույն մակարդակի ապահովումը	Պարբերաբար,հոգեբան
8.	Զևավորել և զարգացնել ԿԱՊԿՈՒ աշակերտների մեջ ճանաչողական, շարժողական, ստեղծագործական ընկալման	Ուս.տարի,հոգեբան

	կարողություններ և հմտություններ	
9.	Մասնակցել աջակցության խմբի/ԱԽ/ հանդիպումներին, մեթոդ միավորման և մանկավարժական խորհրդի նիստերին	Ըստ անհրաժեշտության,հոգեբան
10.	Մասնակցություն մասնագիտական զարգացման ծրագրերին, սեմինարներին, դպրոցական և արտադպրոցական միջոցառումներին	Պարբերաբար,հոգեբան
11.	Ուսումնասիրել էլեկտրոնային եղանակով առկա հատուկ համակարգչային ծրագրերի և մեթոդական հավելվածներ	Պարբերաբար,հոգեբան

Աշխատանքի բովանդակությունը՝ ընդհանուր դպրոց

1.	Կատարել նախնական դիտարկումներ՝դպրոցական կրտսեր,միջին,ավագ դասարաններում:	Ընթացիկ,հոգեբան
2.	Իրականացնել դասալսումներ և դիտարկումներ ՝ պարզելու աշակերտների ուսումնական գործունեության արդյունավետությունը՝դասին ներգրավվածության ուղղու թյամբ , յուրաքանչյուր սովորողի զարգացման շարժընթացը, ինչպես նաև վերլուծել հոգեբանի աշխատանքի շարունակականությունն ու արդյունավետությունը ապահովող գործառույթների ամբողջականությունը	Ընթացիկ,հոգեբան
3.	Ուսումնասիրել դասղեկ-երեխա-ծնող կապի արդյունավետ կառավարման գործընթացը,ըստ անհրաժեշտության կատարել հոգեկշտկողական աշխատանք	Հոգեբան,դասղեկներ

4.	Ուսումնասիրել և վերլուծել սովորողների գործնական ,թեմատիկ և կիսամյակային աշխատանքները՝ նպատակ ունենալով պարզելու ուսումնական կարողությունների ձևավորման ընթացքն ու արդյունքները	Ըստ անհրաժեշտության,հոգեբան
5.	Մանակցել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված թիմային քննարկումներին , մանկավարժական խորհրդի նիստերին, մեթոդ-միավորումների աշխատանքներին՝ որպես հիմնական շահ դիտարկելով ուսումնառողների հոգեկան առողջության պահպանմանն ուղղված արդյունավետ քայլերի և ծրագրերի իրականացումը;	Ընթացիկ,հոգեբան

6.	Զարգացնել իմացական գործընթացները ըստ տարիքային զարգացման չափանիշների:	Ընթացիկ,հոգեբան
7	Մասնակցել ծնողական ժողովներին ըստ անհրաժեշ տության	Պարբերաբար,հոգեբան
8.	Ըստ անհրաժեշտության կատարել անհատական և խմբային հոգեշտկողական և խորհրդատվական աշխատանքներ՝ կրտսեր,միջին և ավագ դպրոցի աշակերտների շրջանում:	Ուս.տարի,հոգեբան
9.	Աշխատանք ծնողների հետ:	Ըստ անհրաժեշտության,հոգեբան
10.	Իրականացնել կրտսեր, դեռահաս և պատանեկան տարիքների վերաբերյալ տեղեկատվական իրազեկման աշխատանքները ուսուցիչների և ծնողների շրջանում,հատկապես տարիքային ակնհայտ դրսևորվող ճգնաժամերի վերաբերյալ իրազեկվածության ապահովման առումով:	Պարբերաբար,հոգեբան

11.Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների իրականացում	Պարբերաբար,հոգեբան-ավագ դպրոցի ուսուցչական կազմ,աշակերտական խորհուրդ:

ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոգեբանական աշխատանքի արդյունավետ իրականացման արդյունքում աշակերտների մոտ դրսևորվել են հետևյալ կարողունակությունները ըստ հոգեբանական առանձնահատկությունների

1.Մոտիվացիայի և հետաքրքրությունների դինամիկ զարգացում

2.Ճանաչողական կարողությունների և հմտությունների զարգացում

3.Միջանձնային հարաբերությունների զարգացում

4.Կոնֆլիկտների արդյունավետ կառավարման հմտությունների զարգացում

5.Ներանձնային և միջանձնային շփման և արդյունավետ համագործակցության ապահովման մեխանիզմների զարգացում

6.Ուսումնական կարողությունների զարգացում

7.Անալիտիկ մտածողության զարգացում